# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 05

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

***ք. Երևան***

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՖՖ) Կարգապահական և էթիկայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նիստը (այսուհետ՝ Նիստ) կայացավ 2022թ. հոկտեմբերի 11-ին, ՀՀ, ք. Երևան, Խանջյան 27 հասցեում:

<u>Նիստին մասնակցում էին՝</u>

<u>Կոմիտեի անդամներ</u>

| | |
|---|---|
| Կարեն Հովհաննիսյան | Կոմիտեի նախագահ |
| Բաբկեն Ղալոյան | Կոմիտեի անդամ |
| Տիգրան Իսրաելյան | Կոմիտեի անդամ |
| Հայկուհի Ռշտունի | Կոմիտեի անդամ, Կոմիտեի քարտուղար |

Կոմիտեի նիստին մասնակցում են Կոմիտեի անդամներից 4-ը, հետևաբար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 7-րդ հոդվածի 7.01 կետի համաձայն՝ Կոմիտեն իրավազոր է:

Նիստն արձանագրում է Կոմիտեի քարտուղար Հ. Ռշտունին:

Կոմիտեի նախագահը ներկայացրեց Կոմիտեի նիստի օրակարգում ընդգրկված՝ ներքոնշյալ հարցերը:

Կոմիտեն, ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 3-րդ հոդվածով, 4-րդ հոդվածով, 5-րդ հոդվածով, 20-րդ հոդվածով, 21-րդ հոդվածով, 28-րդ հոդվածովև Կանոնակարգի այլ վերաբերելի հոդվածներով՝ օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումները.

1. **30.09.2022թ-ի «Փյունիկ Ակադեմիա»-«Ալաշկերտ-2» (ԱԽ-059) խաղի ժամանակահատվածում «Ալաշկերտ-2» թիմի ֆուտբոլիստ Դավիթ Գևորգյանի (31329) կողմից վիրավորական արտահայտություններ թույլ տալու վերաբերյալ:**

*Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց* ՝

Հաստատված համարել «Ալաշկերտ-2» թիմի ֆուտբոլիստ Դավիթ Գևորգյանի (31329) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 41-րդ հոդվածի 17-րդ կետը՝ «Ալաշկերտ-2» թիմի ֆուտբոլիստ Դավիթ Գևորգյանին (31329) որակազրկել 3 խաղով և «Ալաշկերտ» ՖԱ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երկուհարյուրհիսունապատիկի՝ 250.000 ՀՀ դրամի չափով:

2. **28.09.2022թ-ի «Բենտոնիտ-Այգեհովիտ-10»-«Դովեղ-10» (13Մ2-007) խաղը սկսվել է 30 րոպե ուշացումով «Դովեղ-10» թիմի ուշ ներակայանալու պատճառով:**

*Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց* ՝

Հաստատված համարել «Դովեղ-10» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 35-րդ կետը՝ «Դովեղ ՖԱ» ՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

3. **28.09.2022թ-ի «Գետահովիտ-09»-«Շիրակ-3-09» (14C2-007) խաղը սկսվել է 40 րոպե ուշացումով «Գետահովիտ-09» թիմի համազգեստի հետ կապված խնդիրների պատճառով:**

*Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց* ՝

Հաստատված համարել «Գետահովիտ-09» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 35-րդ կետը՝ «Նիկարմ ՖԱ» ՍՊԸ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

4. **28.09.2022թ-ի «Ալաշկերտ-08»-«Աղբյուրակ-08» (15C1-006) խաղը չի կայացել «Ալաշկերտ-08» թիմի համազգեստի հետ կապված խնդիրների պատճառով:**

*Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց* ՝

Հաստատված համարել «Ալաշկերտ-08» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 20-րդ կետը՝ «Ալաշկերտ-08» թիմին գրանցել տեխնիկական պարտություն՝ 0:3 հաշվով և «Ալաշկերտ» ՖԱ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20.000 ՀՀ դրամի չափով:

5. **05.10.2022թ-ի «Ակադեմիա-2-09»-«Վան-08» (15B-013) խաղի ժամանակահատվածում «Ակադեմիա-2-09» թիմի ֆուտբոլիստ Գոռ Պապիկի Մանուկյանի (34984) կողմից «Վան-**

**08» թիմի 2 ֆուտբոլիստների հասցեին վիրավորական արտահայտություններ թույլ տալու վերաբերյալ:**

---

*Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց* ՝

Հաստատված համարել «Ակադեմիա-2-09» թիմի ֆուտբոլիստ Գոռ Պապիկի Մանուկյանի (34984) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 45-րդ հոդվածի 17-րդ կետը՝ «Ակադեմիա-2-09» թիմի ֆուտբոլիստ Գոռ Պապիկի Մանուկյանին (34984) որակազրկել 3 խաղով և «ՀՖՖ Տեխնիկական կենտրոն-Ակադեմիա»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5.000 ՀՀ դրամի չափով:

6. **05.10.2022թ-ի «Ակադեմիա-2-09»-«Վան-08» (15Բ-013) խաղի ժամանակահատվածում «Վան-08» թիմի ֆուտբոլիստ Կարեն Սամվելի Բալբաբյանի (34700) կողմից «Ակադեմիա-2-09» թիմի ֆուտբոլիստի հասցեին վիրավորական արտահայտություններ թույլ տալու վերաբերյալ:**

---

*Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց* ՝

Հաստատված համարել «Վան-08» թիմի ֆուտբոլիստ Կարեն Սամվելի Բալբաբյանի (34700) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 45-րդ հոդվածի 17-րդ կետը՝ «Վան-08» թիմի ֆուտբոլիստ Կարեն Սամվելի Բալբաբյանին (34700) որակազրկել 2 խաղով և «ՖԱ Վան» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5.000 ՀՀ դրամի չափով:

7. **30.09.2022թ-ի «Արարատ»-«Ուրարտու» (ՊԼ-042) խաղի ժամանակահատվածում տոմսերի վաճառք չէր իրականացվել:**

---

*Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց* ՝

Հաստատված համարել «Արարատ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 74-րդ կետը՝ «Արարատ» ՖԱ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50.000 ՀՀ դրամի չափով:

8. **29.09.2022թ-ի «Վեստ Արմենիա»-«Գանձասար» (ԱԽ-056) խաղի ավարտից հետո «Գանձասար» թիմի գլխավոր մարզչի օգնական Արմեն Տատինցյանի կողմից թիմերին սպասարկող անձնակազմի նկատմամբ ոչ սպորտային վարքագիծ դրսևորելու վերաբերյալ:**

---

*Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց* ՝

Հաստատված համարել «Գանձասար» թիմի գլխավոր մարզչի օգնական Արմեն Տատինցյանի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 35-րդ կետը՝ «Գանձասար» թիմի գլխավոր մարզչի օգնական Արմեն Տատինցյանին որակազրկել 2 խաղով և «Գանձասար» ՖԱ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50.000 ՀՀ դրամի չափով։

Կոմիտեի նախագահ՝

_____

անդամներ՝

_____

_____

_____

_____